Իմ կրթական ուղին և ապագայի նպատակները

Ես Սամվել Հարությունյանն եմ՝ Հայաստանից, և իմ կրթական ճանապարհը ձևավորվել է տարբեր ոլորտների նկատմամբ հետաքրքրության, նոր բաներ սովորելու և իմ գիտելիքները գործնականում կիրառելու ցանկության շուրջ։ Դպրոցում սովորել եմ տնտեսագիտական ուղղությամբ, ինչը ինձ հնարավորություն է տվել զարգացնել վերլուծական մտածողություն և ավելի լավ հասկանալ, թե ինչպես են մարդիկ, կազմակերպությունները և հասարակությունը փոխկապակցված։ Միևնույն ժամանակ, դպրոցական տարիներին ակտիվորեն ներգրավված եմ եղել տարբեր նախաձեռնություններում, այդ թվում՝ որպես դպրոցի խորհրդի անդամ, ինչպես նաև կամավորական և թիմային աշխատանքներում։

Ինձ համար հատկապես կարևոր է եղել այն փորձը, որը ստացել եմ կամավորական գործունեության ընթացքում։ Մասնակցել եմ բնապահպանական և սոցիալական նախաձեռնությունների, այդ թվում՝ Հայաստանում թունաքիմիկատների օգտագործման վերաբերյալ հետազոտական աշխատանքների, ինչպես նաև COP17-ի շրջանակում իրականացվող բնապահպանական նախաձեռնություններին, որտեղ նաև համակարգել եմ կամավորների փոքր խմբերի աշխատանքը։ Այդ փորձը ինձ սովորեցրեց ոչ միայն պատասխանատվություն ստանձնել և աշխատել թիմի հետ, այլև հասկանալ, որ կրթությունն արժեքավոր է այն ժամանակ, երբ այն կարողանում ես օգտագործել իրական խնդիրների լուծման համար։

Ես ընտրել եմ Zhejiang University-ն, քանի որ այն ինձ հնարավորություն է տալիս ստանալ միջազգային կրթություն և միաժամանակ զարգանալ այն ոլորտում, որն ինձ իսկապես հետաքրքրում է՝ Communication (Global Communication and Management) մասնագիտությամբ։ Ժամանակակից աշխարհում արդյունավետ հաղորդակցությունը կարևոր է ոչ միայն մեդիայի կամ բիզնեսի, այլև միջազգային հարաբերությունների, կազմակերպությունների կառավարման և հասարակական զարգացման համար։ Ինձ հետաքրքրում է հասկանալ, թե ինչպես կարող են հաղորդակցությունն ու կառավարման հմտությունները օգտագործվել տարբեր մշակույթների և մարդկանց միջև համագործակցություն ստեղծելու համար։

Zhejiang University-ում սովորելը ինձ համար նաև հնարավորություն է լինելու սովորել Չինաստանի և աշխարհի տարբեր երկրներից ժամանած ուսանողների հետ։ Կարծում եմ՝ նման միջավայրը ինձ կտա ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև տարբեր մշակույթների, մտածելակերպերի և միջազգային համագործակցության ավելի խոր ընկալում։

Իմ երկարաժամկետ նպատակն է զարգանալ միջազգային հաղորդակցության և կառավարման ոլորտում և հետագայում իմ ստացած գիտելիքներն ու փորձը կիրառել Հայաստանի զարգացման համար։ Ցանկանում եմ աշխատել այնպիսի նախագծերի և կազմակերպությունների հետ, որոնք կապում են Հայաստանը միջազգային գործընկերների, բիզնեսների և կրթական կառույցների հետ։ Ինձ համար կարևոր է նաև Հայաստանի մասին միջազգային միջավայրում ճիշտ և դրական կերպով ներկայացնելը և այն կապերի օգտագործումը, որոնք կստեղծեմ արտերկրում սովորելու տարիներին։

Կրթություն ստանալը ինձ համար միայն անձնական հաջողության հասնելու միջոց չէ։ Ես ցանկանում եմ օգտագործել այդ հնարավորությունը՝ ձևավորելու մասնագիտական կարողություններ, որոնք հետագայում կարող են արժեք ստեղծել նաև իմ երկրի և հայկական համայնքի համար։ Zhejiang University-ում սովորելը այդ ճանապարհի կարևորագույն քայլերից մեկը կլինի։